մաւոր մունջ դարձած դժբախտ հարսը, այլ իւր սրտի խորքից ամ կքաշի, սրտայոյզ յոգոց կհանի, օղիկ մօղիկ գալով, վիրաւորուած՝ կքաշուի տան մի անկիւն և լուռ ու մունջ արցունք թափելով, կանիծէ իւր ծնած սև օրը։ Ահա այսպիսի խստասիրտ և անխիղճ մարդկանց շնորհիւ, մանկամարդ և գեղատեսիլ հարսերից շատերը հալ ու մաշ լինելով, մոմի պէս մարում են կամաց-կամաց և հանչում են յաւիտեան։ Չնայելով որ ուտիախօս և թրքախօս Հայ կանայք իրենց վարք ու բարքի մաքրութեամբ, իրենց ամօթխածութեամբ և պարկեշտութեամբ, իրենց ամուսնական անսահման հաւատարմութեամբ և հաստատակամ առաքինութեամբ ամբողջ աշխարհիս երեսին նըմանը չունին ոչ մի տեղ և ոչ մի ժողովրդի մէջ։ այսու ամենայնիւ ուտիախօս և թրքախօս կանայք ապրում են կատարեալ տարկութեան մէջ, մինչև ցարդ, բառիս բուն և ընդարձակ նշանակութեամբ։ Ուտիացի կինը կամ հարսը անխօս ու անլեզու մի արարած է, որին մի հասարակ ու չնչին բանի համար ոչ միայն իւր մարդը կարող է ծեծել նրան, հայհոյել և հազար ու մի տեսակ նախատական խօսքերով այրել ու խոցել նրա անմեղ սիրտն ու հոգին, այլ և ընտանիքի ամեն մի արական անդամը նոյնպէս կարող է նրան հայհոյել և անխղճարար ծեծել իւր քէֆի ուզածի չափ։ Ահա մի տարաբախտ աշխարհ, ուր խաւարն ու տգիտութիւնն է թագաւորում, ուր կոշտ ու կոպիտ ոյժը իւր աւերիչ ներգործութիւնն է անում։ Ահա թանձր խաւարի մէջ թաղուած մի